# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կարմիր Աղեկ համայնք
գ. Կարմիր Աղեկ, փողոց 2, տուն 19, հեռ. 091929305
էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am
,, 06,, հունիսի 2017թ. թիվ 06/06-1

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ուղարկում Կարմիր Աղեկ համայնքի ավագանու 2017թ. հունիսի 6-ի թիվ 10-11 որոշումները և համայնքի ղեկավարի թիվ 4 կարգադրությունն առդիր չորս էջով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"06" հունիսի 2017 թվականի N 10

## ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան Կարմիր Աղեկ գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Արմեն Անդրեասյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ,
2. Կարինե Ոսկանյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3. Արմինե Հովսափյան - համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի քարտուղար,
4. Արարատ Ալեքսանյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
5. Վրեժ Երեմյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
6. Մարտուն Մոսինյան - համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
7. Սիրանուշ Միկոյան - համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ):

2. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել համայնքապետարանի աշխատակազմ դրանք մուտքագրվելուց հետո 7-օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

Նիստին ներկա էին և քվեարկեցին ավագանու հետևյալ անդամները

| NN | Ազգանուն անուն հայրանուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1 | Աբրահամյան Սնակ Արտավազդի | | | |
| 2 | Ալեքսանյան Արարատ Վանիչկայի | | | |
| 3 | Երեմյան Վրեժ Ռուբենի | | | |
| 4 | Հովսափյան Արմինե Ժորայի | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ (ստորագրություն) Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (անուն, ազգանուն)

Կ.Տ.
2017թ. հունիսի 6
գյուղ Կարմիր Աղեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"06" հունիսի 2017 թվականի N 11-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կարմիր Աղեկ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 6-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Կարմիր Աղեկ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին և քվեարկեցին ավագանու հետևյալ անդամները

| NN | Ազգանուն անուն հայրանուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1 | Աբրահամյան Սնակ Արտավազդի | (ստորագրություն) | | |
| 2 | Ալեքսանյան Արարատ Վանիչկայի | (ստորագրություն) | | |
| 3 | Երեմյան Վրեժ Ռուբենի | | | |
| 4 | Հովսափյան Արմինե Ժորայի | (ստորագրություն) | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ

2017թ. հունիսի 6
գյուղ Կարմիր Աղեկ

Հավելված
Կարմիր Աղեկ գյուղական համայնքի ավագանու
2017թ. հունիսի 6-ի թիվ 11-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Մելիքսեթյան Անդրանիկ Ալբերտի – 25 000 դրամ /հարազատին կորցրած անձի/
2. Աբրահամյան Արտաշ Վոլոդյայի – 25 000 դրամ /հարազատին կորցրած անձի/
3. Հայրապետյան Կարապետ Սամվելի – 25 000 դրամ /ընտանիքի անդամներ և զավակներ/
4. Պեպանյան Սուրեն Հովհաննեսի – 25 000 դրամ /ընտանիքի անդամներ և զավակներ/

Ընդամենը 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կարմիր Աղեկ համայնք, գ. Կարմիր Աղեկ Փ2, Շ19
հեռ. 091 929305, էլ.փոստ karmiraghegi.lori@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

"06" հունիսի 2017 թվականի N 4-Ա

## ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի ԹԻՎ 2-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՚՚Իրավական ակտերի մասին՚՚ ՀՀ օրենքի 72–րդ հոդվածի 1-ին մասով և համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 6 -ի N 10-Ա որոշմամբ՝

Կարգադրում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 22-ի ՚՚Դիմումների քննարկման հանձնաժողով կազմելու մասին՚՚ թիվ 2 -Ա կարգադրությունը:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017թ. հունիսի 6
գյուղ Կարմիր Աղեկ